ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

§ 9. ՀԻՆ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ՔԱՂԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1

Ք.ծ.ա. XIV դարի խեթական արձանագրություններում առաջին անգամ հիշատակվում են հայկական ***Հայասա, Իսուվա*** և այլ պետություններ: Խեթական արքաները բազմաթիվ արշավանքներ են ձեռնարկել՝ նվաճելու Հայասան: Սակայն Հայասայի արքաները հաջողությամբ պաշտպանում էին իրենց երկրի անկախությունը: Ի վերջո Հայասայի և Խեթական տերության միջև կնքվեց հաշտության պայմանագիր, այն ամրապնդելու համար խեթական արքայադստերը կնության են տվել ***Հայասայի արքա Խուկանային***:

2

Գաղութներ էին տեղափոխվում առավել աղքատ քաղաքացիները, զբաղվում էին արհեստներով, առևտուր էին անում տեղական ցեղերի հետ, ամուր կապ պահպանելով իրենց մայր քաղաքի հետ: Փյունիկյան գաղութներից առավել նշանավորը ***Կարթագենն*** էր, որը հետագայում դարձավ հզոր տերություն՝ Հռոմի մրցակիցը:

Առաջավոր Ասիայում փյունիկեցիները լավագույն նավաշինարարներն էին ու նավավարները: Նրանք նավարկում էին ոչ միայն ծովում, այլև դուրս էին գալիս Ատլանտյան օվկիանոս:

Փյունիկյան առևտրի գլխավոր առարկաներից մեկը ստրուկներն էին: Նրանց պահանջարկն աճեց Առաջավոր Ասիայում հողագործության և արհեստների զարգացման հետ: Փյունիկեցիները գնում էին ստրուկներ, ինչպես նաև հափշտակում էին առափնյա բնակիչներին ու հանդիպած նավերի մարդկանց, որպեսզի վաճառեն ստրկության:

3

Խեթերի մոտ զարգացած էր շինարարական արհեստը: Հզոր և անմատչելի ամրոցների կառուցման ժամանակ նրանք օգտագործում էին վիթխարի հղկված քարաբեկորներ: Ամրոցներն ունեին գաղտնի գետնանցումներ՝ պաշարումների ժամանակ, անհրաժեշտության դեպքում, ամրոցից հեռանալու կամ օգնություն ստանալու համար:

Խաթուսասի դարպասները

Խեթական բանակում մեծ տեղ էր տրվում գիշերային երկար տեղաշարժերին, որոնց շնորհիվ զորքը հայտնվում էր թշնամու թիկունքում և արագ հարվածով վճռում ճակատամարտի ելքը:

Երբ խեթական հաղթական բանակը վերադառնում էր պատերազմից, քաղաք մտնելու համար պետք է անցներ հատուկ կառուցված և քրմերի կողմից օրհնված փայտե կամարի տակով՝ մաքրագործվելու պատերազմում գործած մեղքերից և թափած արյունից: Զորքի անցնելուց հետո ***հաղթակամարը*** այրում էին՝ ի թողություն զինվորների գործած հանցանքների:

4

Ամենահեռավոր նավարկությունը փյունիկեցիները կատարել են Ք.ծ.ա. մոտ 600 թ., երբ ծովագնաց Հանոնի գլխավորությամբ Կարմիր ծովի ափերով շարժվեցին հարավ, ընդհուպ Աֆրիկայի հարավային ափերը: Նավարկության երրորդ տարում նավերն Ատլանտյան օվկիանոսից Ջիբրալթարի նեղուցով մտան Միջերկրական ծով: Իսկ սա նշանակում է, որ փյունիկեցիներն աշխարհում առաջինն են կատարել շուրջաֆրիկյան ճանապարհորդություն: